## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**N 684-Ա/2** **19.04.2022թ.**

**«ՀԱՅԱՀԱՎԱՔ» ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մարտի 22-ի N 447-Ա հրամանով՝ «Հայահավաք» նախագծի իրականացման նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ   Ե Մ

1. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար (տող՝ «Երաժշտարվեստի նախագծեր») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված գումարներից հատկացնել 3900,0 հազար (երեք միլիոն ինը հարյուր հազար) դրամ «Հայահավաք» նախագծի իրականացման ծախսերն ապահովելու համար:

2. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝

սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և նախարարության գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն

հրամանի 1-ին կետում նշված գումարը «Պետական կամերային նվագախմբի ընկերներ» հասարակական կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

3. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն, բովանդակային հաշվետվությունների ընդունման գործառույթներ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X